

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Սեդա Գալստեան

sedagalstyan@yahoo.com

Ծնած է Երեւան, 1957ին: 1980ին աւարտած է ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտը: 1992էն ցայսօր Հայաստանի Պատմութեան թանգարանի նոր եւ նորագոյն պատմութեան բաժնի վարիչն է: Հրատարակութեան պատրաստած է Ա-Դոյի, *Հայութեան երկունքը* (2014) հատորը, համահեղինակն է (Սահակ Թորոսեանի հետ) *Հայաստանի առաջին հանրապետութեան Երեւանի նահանգապետը* մենագրութեան (2007) եւ *Կոչեմ ապրողաց* գիրք-ալպոմին (2015), հեղինակն է *Սարդարապատի հերոսը, մահապարտների հոգին, Կարսի դաւաճանութեան զոհը* (2019), *Վերածնունդ Հայաստան՝ Տէր Զօրից Սարդարապատ* (2020) հատորներուն, ինչպէս նաեւ *Հայոց պետականութեան վերածննդի 100 էջերը* լուսանկարային-ալպոմ դասագիրքին (2018): 2022ին արժանացած է «Հայաստանի նոր եւ նորագոյն պատմութիւնը ճանաչելի դարձնելու» պատուոգրին:

Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ Հայաստանի Ա. Հանրապետութիւնը, Խորհրդային շրջանը: 2023էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*:

Վաչագան Գրիգորեան

vachik_grigoryan@mail.ru

Ծնած է 1959ին, ՀՀ Կոտայքի Քաղսի գիւղը: 1988ին պաշտպանած է թեկնածուական, 2003ին դոկտորականը՝ «Լեւոն Շանթի Դրամատուրգիան» նիւթով: 2010ին ստացած է փրոֆեսորի կոչում: 1989էն դասախօս է, իսկ 2003էն վարիչը՝ Գաւառի Պետական Համալսարանի հայոց լեզու եւ գրականութիւն ամբիոնին, 1991-95՝ Հրազդանի շրջանային ժողկրթբաժնի վարիչ, 1995-99՝ Կոտայքի մարզի կրթութեան վարչութեան պետի տեղակալ: 2013ին արժանացած է «Հրանտ Մաթեոսեան» մրցանակին: Հեղինակ է Հրանտ Մաթեոսեանի եւ Լեւոն Շանթի մասին մենագրութիւններու, դասագիրքերու, օժանդակ ձեռնարկներու: Իր վերջին հատորը՝ *Լեւոն Խեչոյեանի սրբեղծագործութիւնը* (2019):

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը դասական եւ արդի հայ գրականութիւնն է: 2001էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Ռուպերթ Թաթոյեան

r.tatoyan@gmail.com

Ծնած է Երեւան, 1976ին: 2015ին պաշտպանած է թեկնածուական՝ «Արեւմտահայութեան թուաքանակի վերաբերեալ օսմանեան կառավարութեան եւ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի վիճակագրական տուեալները Հայկական Հարցի համատեքստում (1878-1914 թթ.)» նիւթով: Ներկայիս աւագ գիտաշխատող է Հայոց Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտի աղբիւրագիտական ուսումնասիրութիւններու բաժնին, անդամ է նոյն հիմնարկի գիտական խորհուրդին (2015), եւ *Յեղասպանագիտական հանդէսի*

խմբագրական կազմին (2014): Հեղինակ է արեւմտահայութեան ժողովրդագրութեան վերաբերեալ զանազան հատորներու, որոնց վերջինը՝ *Արեւմտեան Հայաստանի Պիթիսի նահանգի հայ բնակչութեան թիւը Մեծ Եղեռնի նախօրեակին* (2022) հատորը: Իր վերջին գիտական ուսումնասիրութիւնը վերնագրուած է «Աքսորեալ գէյթունցիների գինուած դիմադրութեան փորձը Դէր Զորի անապատում»:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Հայկական Հարցը, Հայոց Յեղասպանութեան պատմութիւնը, Հայոց Յեղասպանութեան նախօրեակին Արեւմտեան Հայաստանի եւ արեւմտահայութեան ժողովրդագրութիւնը, արեւմտահայութեան հասարակական-քաղաքական, կրթական եւ կրօնական կեանքը:

Յասմիկ Իրիցեան

hiritsyan@gmail.com

Ծնած է 1985ին, Վրաստանի Բորժոմի շրջանի Տաքաձղուրի գիւղը: Աւարտած է ԵՊՀ հայ բանասիրութեան ֆակուլտետը: Ներկայիս կ'աշխատի «Գաբրիէլ Այվազեանի (Այվազովսկի) լեզուագիտական ժառանգութիւնը» թեմայով թեկնածուականին վրայ: 2010էն կ'աշխատի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի «Ձեռագրագիտութեան» բաժինը: Մասնակցած է *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի* հատորաշարքին պատրաստման: Պատրաստած է «Տեառն Ներսէսի՝ հայոց կաթողիկոսի ասացեալ ի հանդերձեալ գալուստն Քրիստոսի» խորագրով բնագիրը (*Մատենագիրք հայոց, ԻԲ. հատոր, ԺԲ. դար, Ներսէս Շնորհալի, Գիրք Բ.*, Երեւան, 2022): 2019էն հայագիտական նիւթեր կը դասաւանդէ Ճարտարապետութեան եւ շինարարութեան Հայաստանի ազգային համալսարանի միջին մասնագիտական կրթութեան քոլէճին մէջ:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայերէնի տարբեր փուլերու քննութիւնը, հայերէնի զարգացման պատմութիւնը, ձեռագրագիտութիւնը, լեզուաբանութիւնը, բառարանագրութիւնը:

Մանէ Խառատեան

art.phil.maneh@gmail.com

Ծնած է 1985ին, Ալավերդի: Աւարտած է ԵՊՀ փիլիսոփայութեան եւ հոգեբանութեան ֆակուլտետի մագիստրականը՝ «Ժամանակակից արուեստը՝ որպէս տեխնածին քաղաքակրթութեան երեւոյթ» նիւթով: 2010-18՝ պաշտօնավարած է Կամերային երաժշտական թատրոնին մէջ, 2020-21՝ Ճարտարապետութեան եւ շինարարութեան Հայաստանի ազգային համալսարանին մէջ: Յունուար 2021էն Հայաստանի Պատմութեան թանգարանի տնօրէնի օգնական է:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ փիլիսոփայութիւնը, արուեստը, հոգեբանութիւնը, հոգեվերլուծութիւնը, բժշկագիտութիւնը, կենսաբանութիւնը, էթնոհոգեբանութիւնը: 2023էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Անահիտ Խեչոյեան

khechoyan.anahit@mail.ru

Ծնած է 1999ին, Վրաստանի Բարալէթ գիւղը: 2023ին ԵՊՀ-ի մէջ պաշտպանած է մագիստրականը՝ «Մազէ կամուրջ վէպի գեղարուեստական համա-

կարգը» նիւթով: 2022էն կը պաշտօնավարէ ՀՀ ԳԱԱ ՀԱԻԻ մէջ: Հեղինակ է բանահիւսական-ազգագրական յօդուածներու:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ժամանակակից բանահիւսութիւնը, համացանցը եւ բանահիւսութիւնը, նոր եւ նորագոյն գրականութիւնը, գրականութեան եւ բանահիւսութեան փոխազդեցութիւնները:

Աննա Կազարեան

kazaryananna15@mail.com

Ծնած է 1996ին, Վրաստանի Ախալքալաքի շրջանի Բաւրա գիւղը: 2021ին պաշտպանած է մագիստրականը՝ ԵՊՀ Հայագիտական հետազօտութիւնների ինստիտուտին մէջ, «Էրզրումի նահանգի հայութեան տեղահանումը եւ բնաջնջումը (Քղի գաւառակի օրինակով), 1914-15» նիւթով: 2024էն կ'աշխատի թեկնածուականին վրայ, ՀՅԹԻ մէջ՝ «Էրզրումի նահանգի սոցիալ-տնտեսական դրութիւնը 19րդ դարի երկրորդ կէսին եւ 20րդ դարի սկզբին» նիւթով, միաժամանակ ՀՅԹԻ աղբիւրագիտական ուսումնասիրութիւններու բաժնի կրտսեր գիտաշխատող է:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Հայկական Հարցը, Հայոց Յեղասպանութեան պատմութիւնը, Էրզրումի նահանգի հայութեան ճակատագիրը, մշակութային ցեղասպանութիւնը:

Վաչէ Ղազարեան

vatcheg@gmail.com

Ծնած է 1954ին, Հալէպ: 1983ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Վահան Թէքէեանի կեանքը եւ ստեղծագործութիւնը» նիւթով: 2002-19՝ պաշտօնավարած է իբրեւ ակադեմական մասնագէտ, փրոֆեսորի աստիճանով, Մոնթերէյ, Քալիֆորնիա, օտար լեզուներու հիմնարկին մէջ: Խմբագրած է հրատարակութեան պատրաստած է բազմաթիւ անտիպ ուսումնասիրութիւններ, յուշեր, կատարած է թարգմանութիւններ: Հեղինակ է բազմաթիւ գիտական յօդուածներու եւ մենագրութիւններու, որոնց վերջիններն են *Ազգային պատուիրակութեան գործունէութիւնը 1915-1916* (2017) եւ *Համահաւաք արեւագրութիւններ Թուրքիոյ հայոց ազգային երեսփոխանական ժողովի, համագումար ազգային ժողովի եւ համազգային խորհուրդի (1919-1922)* (առցանց հրատ.- <https://mayreni.net/>):

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ազգային պատմութիւնը եւ գրականութիւնը, ի մասնաւորի Վահան Թէքէեանը, Արմենական կուսակցութիւնը, Պօղոս Նուպարի գործունէութիւնը, արեւմտահայութիւնը Օսմանեան կայսրութեան մէջ: 1981էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Գայիանէ Մախմուրեան

ggmakhm@gmail.com

Ծնած է Երեւան, 1955ին: 1978ին աւարտած է Մաքսիմ Գորկիի անուան Քիւելի պետական մանկավարժական ինստիտուտի պատմական ֆակուլտէտը: 2009ին պաշտպանած է դոկտորական ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտին մէջ՝ «1918-1920թթ. Հայաստանի Հանրապետութիւնը Մեծ Բրիտանիայի քաղաքականութեան մէջ» նիւթով: Ներկայիս նոյն ինստիտուտի առաջատար գիտաշխատող է: Շրջան մը եղած է անդամ՝ ՀՀ պաշտպանութեան նախարարին կից գործող հասարակական խորհրուրդին:

Հեղինակ է բազմաթիվ հատորներու, որոնց վերջիններն են՝ *Օսմանեան կառավարութեան՝ 1918թ. Բաթումի պայմանագրից հրաժարուելու մասին* (2022), *The French Policy in the Republic of Armenia and Transcaucasia in 1919* (2023), *On the Historical and Political Assessment of the Treaty of Moscow, Dated March 16 (18), 1921* (2024), կազմած եւ ուսերէն (2011), ապա անգլերէն (2020) թարգմանած է՝ *Հայաստանը ԱՄՆ պետական դեսպարատմանի 1917-1920թթ. փաստաթղթերում* հատորը, անգլերէնէ թարգմանած է Ռիչըրտ Յովհաննիսեանի *1918-1920թթ. Հայաստանի Հանրապետութեան միջազգային յարաբերութիւնները* հատորը (2007): Հեղինակ է աւելի քան 75 գիտական յօդուածներու, որոնց նորագոյնը՝ «ԽՍՀՄ փլուզման պատճառների լուսաբանումը ԱՄՆ, Միացեալ Թագաւորութեան եւ Ֆրանսայի XXI դարի պատմաբանների աշխատութիւններում» (2024): Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ԱՄՆի, Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսայի քաղաքականութիւնը 1918-20ի Հայաստանի Հանրապետութեան հանդէպ, ԱՄՆի վերաբերմունքը Հայկական Հարցին՝ 1916-23, Մեծ Եղեռնի պատմութիւնը 1915-23: 2015էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Արմինէ Մելկոնեան

armine.melkonyan@yahoo.com

Ծնած է 1983ին, Երեւան: 2006-7՝ ուսանած է Ժնեւի համալսարանին մէջ: 2014ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Դաւիթ Անյաղթի՝ ներքողեան ի սուրբ խաչն աստուածընկալ՝ երկը եւ դրա մեկնութիւնները (պատմագիտական եւ աստուածաբանական վերլուծութիւն)» նիւթով: 2008էն Մատենադարանի ձեռագրագիտութեան եւ 5-14րդ դարերու հայերէն բնագրերու ուսումնասիրման բաժիններու աւագ գիտաշխատող է: 2014էն կը դասաւանդէ Հայաստանի Գեղարուեստի պետական ակադեմիային մէջ: 2021էն յետդոկտորական հետազօտութիւն կը կատարէ Ֆլորենցիայի համալսարանին մէջ՝ «Հայաստանը որպէս հանգոյց. կապեր եւ մշակութային փոխյարաբերութիւններ միջնադարեան Եւրասիայում. IX-XIV դդ.» նիւթով: Հեղինակ է յօդուածներու, հրատարակած է հայ միջնադարեան քննական բնագրեր: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայ միջնադարեան աստուածաբանական եւ փիլիսոփայական երկերը, մեկնութիւնները, ծիսամատենները, հայ ձեռագրագիտութեան հարցերը:

Էլինա Միրզոյեան

elina-mirzoyan@ysu.am

Ծնած է Երեւան, 1988ին: 2015ին պաշտպանած է թեկնածուական՝ «Հայկական թեմատիկան Ակոսի հրապարակախօսութիւնում (1996-2007)» նիւթով: 2024էն դոցենտ է ԵՊՀ թրքագիտութեան ամբիոնին, 2015էն գիտաշխատող է ՀՅԺԻԻն մէջ: Հեղինակ է շուրջ 25 գիտական յօդուածի, համահեղինակ է Հայ երեխաների թուրքացումը Հայոց Յեղասպանութեան տարիներին գիրքին (2022): Կատարած է թարգմանութիւններ հայերէնէ թրքերէն: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Հայոց Յեղասպանութիւնը, ազգային ինքնութիւնը, հայ-թրքական յարաբերութիւնները, պոլսահայ եւ արեւմտահայ մամուլի պատմութիւնը, Հայոց Յեղասպանութեան

թրքական ժխտողականությունը, ադրբեջանագիտությունը, սփիտքագիտությունը, թրքագիտությունը եւ էթնոհոգեբանությունը:

Րուպերթ Մկրտիչեան

rma@cadcafmservices.com

Ծնած է Մեսեչուսեթ, Մ. Նահանգներ, 1953ին: 1974ին աւարտած է Թաֆց համալսարանի քաղաքային ճարտարապետութեան, 1975ին՝ նոյն համալսարանի գեղարուեստից բաժինը, իսկ 2022ին՝ ոչ-շահութաբեր կառավարման մասնագիտությունը՝ Ուորսեսթըր համալսարանէն: Անցնող տասնամեակին սատարած է իր հօր Աբրահամ Մկրտիչեանի մետաղի գեղարուեստական մշակումներու ցուահանդէսներու կազմակերպման: Նշանակալից էին իր 2022ին՝ Քէյմպրիճի գրադարանին, ինչպէս նաեւ Արիզոնայի մանրակերտից թանգարանին մէջ կազմակերպած ցուցահանդէսները: Ստորագրած է խոհագրութիւններ արուեստի մասին:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ամերիկահայ արուեստը: 2023էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Զաւէն Մսրըլեան

Ծնած է 1938ին, Պէյրութ: 1963ին՝ պաշտպանած է մագիստրականը: 2003ին ՀՀ ԳԱԱն իրեն շնորհած է պատուոյ դոկտորայի կոչում, իսկ 2014ին ընտրուած է ՀՀԳԱԱ արտասահմանեան անդամ: Ասպարէզով կրթական մշակ է: 1967-2017՝ եղած է Պէյրութի Հայ ակետ. գոլէճի տնօրէնը, իսկ այնուհետեւ՝ պատուակալ տնօրէն: Հեղինակ է մօտ 100 պատմական ուսումնասիրութիւններու, բազմաթիւ գիրքերու, որոնց վերջինը՝ *For the Armenian Cause* (2023): 1971էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Արմէն Պետրոսեան

alpehit@gmail.com

Ծնած է 1948ին, Երեւան: 1977ին աւարտած է ԵՊՀ կենսաբանութեան ֆակուլտէը: 1996ին պաշտպանած է թեկնածուական՝ ՀՀ ԳԱԱ ՀԱԻԻն մէջ՝ «Արամի առասպելը հայ աւանդութեան մէջ» նիւթով: 2000ին պաշտպանած է դոկտորականը: Ներկայիս գլխաւոր գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ ՀԱԻԻ բանահիւսութեան տեսութեան եւ պատմութեան բաժինին մէջ: Աշխատակցած է *Հայ սովետական եւ Ինչ է, ո՞վ է. մանկական* հանրագիտարաններուն: 1984էն կը զբաղի հայոց ազգաձագման հարցերով ու կը պաշտպանէ հայ ազգաձագման էթիւնեան վարկածը: Հեղինակ է մենագրութիւններու, որոնց վերջինը՝ *Հայկական էպոսի հնագոյն ակունքները 2* (2020):

Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ հայ եւ հնդեւրոպական առասպելաբանութիւնը, հայ-հնդկական, հայ-յունական, հայ-հռոմէական եւ հայ-կովկասեան առասպելաբանական առնչութիւնները, հայ հեթանոսական եւ ուրատական դիցարանը, հայ ժողովուրդի նախապատմութիւնն ու նախալեզուն, վիշապ քարակոթողները: 2011էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Եաքոպ Պրէօ

jakob.breu.nfg@leibniz-gwzo.de

Ծնած է Վիեննա, 1996ին: 2024ին պաշտպանած է մագիստրականը Վիեննայի համալսարանին մէջ՝ «Հայերու մասնակցութիւնն ու կարեւորութիւնը

1683-90ի թրքական մեծ պատերազմին» նիւթով: Ներկայիս կ'աշխատի դոկտորականին վրայ:

Գիտական հետաքրքրություններու ծիրը կ'ընդգրկէ Արեւելեան Եւրոպայի եւ Հապսպուրկի կայսրութեան հայերը, ուշ միջ-նադարու հայ առեւտրական ցանցերը, Հայոց Յեղասպանութեան հետեւանքները:

Կարինէ Ռաֆայէլեան

karine.rafaelyan@mail.ru

Ծնած է 1964ին, Երեւան: 1985ին աւարտած է Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան Պետական մանկավարժական հիմնարկի (այժմ համալսարան) հայոց լեզուի եւ գրականութեան բաժինը: 1994էն Գրականութեան եւ արուեստի թանգարանի մասնաճիւղ Դերենիկ Դեմիրճեանի տուն-թանգարանի վարիչն է: 2008էն իբրեւ մշակութային լրագրող կը պաշտօնավարէ «Իրատես» լրատուական ցանցին մէջ: Կազմած, վերծանած, հրատարակութեան պատրաստած եւ խմբագրած է շարք մը երկեր: Հրատարակած է գրականագիտական ուսումնասիրություններ:

Գիտական հետաքրքրություններուն ծիրը կ'ընդգրկէ գրականագիտությունը, թանգարանագիտությունը, մշակութաբանությունը: 2014էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Վերա Սահակեան

verasahakyan@gmail.com

Ծնած է 1982ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշէն գիւղը: 2017ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Յատուկ Կազմակերպութեան՝ Թեշքիլաթը Մախսուսայի գործունէությունը Օսմանեան կայսրությունում» նիւթով: Ներկայիս կրտսեր գիտաշխատող է Մաշտոցի Անուան Մատենադարանի արաբագիտութեան բաժնին մէջ: 2020էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Նուարդ Վարդանեան

vardanyan.nvard@ysu.am

Ծնած է Երեւան, 1980ին: 2006ին պաշտպանած է թեկնածուական՝ «Հայոց իրապատում հեքիաթը. ժանրային-տիպաբանական քննություն» նիւթով: 2005էն կը պաշտօնավարէ ՀՀ ԳԱԱ ՀԱԻԻ բանահիւսութեան բաժնին մէջ, ներկայիս բանագիտութեան բաժնի աւագ գիտաշխատող է: 2006էն օգնական է ԵՊՀ Հրանտ Թամրազեանի անուան հայ գրականութեան պատմութեան եւ գրականութեան տեսութեան ամբիոնի: 2017էն դոցենտ է: 2022ին հիմնած է ու ցարդ կը նախագահէ «ՅԵՆՔ» գիտամշակութային հասարակական կազմակերպությունը: 2009էն *Ոսկէ դիւան* հեքիաթագիտական հանդէսի խմբագրակազմի անդամ է, 2023էն՝ պատասխանատու խմբագիրը *Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի աշխատություններ* պարբերականին: 2013ի «Երիտասարդ գիտնականներ» մրցոյթին արժանացած է «Լեզուաբանություն եւ գրականություն» բնագաւառի Հ. Աճառեանի անուան երկրորդ մրցանակին:

Հեղինակ է *Հայոց իրապատում հեքիաթը, ժանրային-տիպաբանական քննություն*, գիրքին (2009): Համահեղինակ է, նաեւ համախմբագիր՝ շարք մը բանահիւսական գիրքերու, կազմած եւ խմբագրած է ժողովածուներ:

Գիտական հետաքրքրություններու ծիրը կ'ընդգրկէ հայ ժողովրդական բանահիւսութիւնը, հեքիաթները, ծիսերգերը, միջժանրային փոխառնչութիւնները, բանահիւսութիւն-գրականութիւն կապերը, ժամանակակից բանահիւսութիւնը:

Անդրանիկ Տագէսեան

adakessian@haigazian.edu.lb

Ծնած է 1960ին, Պէյրութ: 2011ին պաշտպանած է դոկտորականը՝ “Democracy and Integration in Multicommunal Polities: The Armenians and the Kurds in Lebanon” նիւթով: 1993-2017՝ պատասխանատու քարտուղար, իսկ 2018էն պատասխանատու խմբագիրն է *Հայկազեան հայագիտական հանդէսին*: Անդամ է *Հայագիտական հարցեր* (2014), *Յեղասպանագիտական հանդէս* (2018), *Բանբեր Հայաստանի արխիւների* (2023) պարբերականներու խմբագրակազմերուն: Անդամ է Ծիծեռնակաբերդի Հայոց Յեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի գիտական խորհուրդին (2020) եւ Ուաշինկթընի Armenian National Instituteին (2024): 2011էն տնօրէն է Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնին: Այդ հանգամանքով կազմակերպած է ամէնամեայ գիտաժողովներ: Խմբագրած է գիրքեր, վերջինը՝ *Հայերը Արաբական Ծոցի երկիրներուն մէջ գիտաժողովի նիւթեր* (2024), կազմած է գիրքեր, վերջինը՝ *ՀՀԸՀ Հաճընի որբանոցը* (1919-1920) (2021), ունի մենագրութիւններ, վերջինը՝ *Լիբանանի հայօճախը, գիրք Ա., համարկումին խաչուղիները (1920-2005)* (2015):

Գիտական հետաքրքրություններու ծիրը կ'ընդգրկէ ժողովրդավարացումը, մարդկային իրաւանց, ինքնութեան, համարկումի, Սփիւռքի մշակոյթի եւ պահպանման, Միջին Արեւելքի հայօճախներու պատմութեան հարցերը: 1993էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Սեւան Տէյիւմենճեան

haygazian@gmail.com

Ծնած է Պոլիս, 1976ին: 2005ին ԵՊՀի մէջ պաշտպանած է թեկնածուական՝ «Անդրանիկ Ծառուկեան. կեանքն ու գործը» նիւթով: 2019-23՝ Թուրքիոյ խորհրդարանի պատգամաւոր Կարօ Փայլանի խորհրդական, ներկայիս հայոց լեզու, գրականութիւն եւ հայոց պատմութիւն կը դասաւանդէ Երուսաղէմի Ս. Թարգմանչաց վարժարանին մէջ: 2017էն անդամ է *Բագինի* խմբագրական խորհուրդին: Կազմած, խմբագրած եւ հրատարակութեան պատրաստած է աւելի քան տասնեակ մը հայ հեղինակներու երկեր, որոնց վերջինը 2022ին՝ Զապէլ Եսայեանի *Ժողովուրդի մը հոգեվարքը*, ունի նաեւ թրքերէնէ հայերէն եւ հայերէնէ թրքերէն բազմաթիւ թարգմանութիւններ: Գիտական հետաքրքրություններու ծիրը կ'ընդգրկէ ԺԹ.-Ի. դարերու հայ գրականութիւնը, Հայ Եկեղեցւոյ պատմութիւնը, հին ու միջնադարեան մատենագրութիւնը: 2003էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Մուշեղ Տոնոյեան**mushotonoyan0440@gmail.com**

Ծնած է 2003ին, Երեւան: 2024ին կաւարտած է ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետը: Մանկութենէն առնչուած է ռէփին. առաջին ռէփ երգերը հրապարակած է 2020ին, կը գրէ նաեւ բանաստեղծութիւններ:

2023էն կ'աշխատակցի ՀՀֆին:

Զաքար Քեշիշեան**kamilazakar@yahoo.com**

Ծնած է 1968ին, Այնճար: Ուսանած է Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցը, խորանալով ժողովրդական նուագարաններու եւ խմբավարական բաժիններուն մէջ: 1999ին պաշտպանած է թեկնածուական: Դասաւանդած է Լիբանանի Պետական բարձրագոյն երաժշտանոցի, Հայկազեան համալսարանի, Համազգայինի Բարսեղ Կանաչեան երաժշտական քոլէճին մէջ: Վարած է խմբավարութիւնը *Պէյրութ չենց – էլսիսթեմա*, Արցախի Վարանդա մանկական, պատանեկան եւ երիտասարդական պետական երգախումբերուն: 2022էն ատենապետն է Համազգային հայ կրթական եւ մշակութային միութեան կեդրոնական վարչութեան, 2022էն Լիբանանի հայոց թեմի ազգային երեսփոխան է: Պարգեւատրուած է «Վաչագան Բարեպաշտ» նախագահական շքանշանով (2002), Շուշիի պատուաւոր քաղաքացի է (2004), արժանացած է «Եղիշէ» համահայկական մշակութային մրցանակին (2005), 2016ին ստացած է «Արցախի Հանրապետութեան մշակոյթի վաստակաւոր գործիչ»ի յուշամետալը: 2011էն կ'աշխատակցի ՀՀֆին: